Վ. Ս. ԵՐԿԱՆՅԱՆ

ԷՋԵՐ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(1880-ական թվականներ)

1880-ական թվականների սկզբներին Անդրկովկասում շարունակվում էր նախորդ տասնամյակում ծայր առած հայկական կրթական գործի հարաճուն զարգացումը։ Կրթական գործիչներն անդուլ ջանքերով խորացնում ու կատարելագործում էին ազգային դպրոցների աշխարհիկ բնույթը, նրանցում ներդնում էին մանկավարժական առաջավոր սկզբունքներ, պայքարելով կղերական նեղմտության ու սահմանափակության դեմ՝ նպաստում էին դպրոցի ազգային-քաղաքական նպատակամղմանը, աշակերտներին տալիս բնագիտական և գործնական գիտելիքներ։ Դպրոցը դարձել էր հայ հասարակության սնեռուն ուշադրության առարկան։ Ժողովրդին լուսավորելու քարոզն ու կոնկրետ գործը ամուր շաղկապվում էին իրար և տալիս ցանկալի արդյունքներ։ Եթե 1871 թ. Անդրկովկասում գործում էր ավելի քան 4000 աշակերտով 90 հայկական դպրոց[1], ապա 1882 թ. երկրամասի հայկական չորս թեմերում կար արդեն 230-ից ավելի դպրոց՝ մոտ 12,5 հազար աշակերտով[2]։ Ամբողջ Ռուսաստանում այդ տարիներին գործում էր 330 հայկական դպրոց։

Ռուս-թուրքական պատերազմից հետո հայերի ազգային զարթոնքի անհնարին թաց վերելքը է՛լ ավելի խթանեց կրթական գործի ծավալմանը։ 10—15 տարվա դպրոցական աշխույժ առաջընթացի բարձրակետը դարձավ 1882 թ. ամռան Թիֆլիսում կայացած հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովը։ Ժամանակի պայմաններում սա մի բացառիկ երևույթ էր և մեծապես նպաստում էր ուսուցիչների մասնագիտական մակարդակի բարձրացմանը, ազգային դպրոցների միասնականության ստեղծմանը։ Եկեղեցին, որ դպրոցի պաշտոնական իրավատերն էր, փաստորեն կողմնակի դիտողի դեր էր ստանձնել և նահանջելով աշխարհիկ մտավորականության առաջ, նրան վերապահել էր վճռական խոսք ասելու դպրոցի ապագա ընթացքի մասին։

Այդ տարիներին որոշակիորեն գծագրվել էին հայկական դպրոցների երեք հիմնական տիպերը՝ եկեղեցական-ծխական, որը տարրական կրթություն էր տալիս, հոգևոր, որն ավելի բարձր մակարդակ ուներ և հաստատորեն կանգնել էր միջնակարգ դպրոցի վերածվելու ուղու վրա. հոգևոր կոչումը միայն ձևական բնույթ էր կրում, թեմական դպրոցները, որոնք փաստորեն ազգային միջնակարգ ուսումնարաններ էին և զգալի դեր էին խաղում ուսուցչական կադրեր պատրաստելու գործում։ Կար նաև էջմիածնի Գևորգյան ճեմարանը, որը գնալով ստանում էր բարձրագույն դպրոցի նշանակություն։ Աշխարհիկ տարրը,

---

[1] Տե՛ս ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 32։

[2] Տե՛ս «Արծագանք», 1882, № 27, էջ 427։

ազգային նոր, եռանդուն ու դեմոկրատական շնչով տոգորված մտավորականությունը վճռական դեր էին խաղում դպրոցների կյանքում, և դրանով եկեղեցու տնօրինությունը վեր էր ածվում մեծ մասամբ արտաքին պատվարի։ Իրականացնելով դպրոցի ընդհանուր ղեկավարությունը, էջմիածինը մեծապես ելնում էր ժամանակի ու հասարակության թելադրանքներից։

Այսպիսով, ցարիզմի կաշկանդիչ պայմաններում, պետական (ռուսական) դպրոցական սիստեմին զուգընթաց գործում էր հայկական ինքնավար դպրոցը, որը ազգային կրթությունն ապահովող միակ հաստատությունն էր հայերի համար։

1880-ական թվականների սկզբից Ռուսաստանում լայնորեն գլուխ բարձրացրեց քաղաքական ռեակցիան։ Երկրում դեմոկրատական ազատ շարժման առաջն առնելու համար կալվածատիրական-աղնվականական ուժերը համախմբեցին իրենց ջանքերը, տոլստոյ-պոբեդոնոսցևյան խմբավորումը խաչակրաց արշավանքի դուրս եկավ այն ամենի դեմ, ինչը նոր էր, առաջադիմական և հակասում էր ցարիզմի որդեգրած «ուղղափառություն, ինքնակալություն և ժողովրդայնություն» բանաձևին։ Ռեակցիան նոր հարձակում սկսեց ժողովրդական կրթության ասպարեզում, նպատակ ունենալով խորացնել դասային սկզբունքը, «խոհարարուհիների դավակների» առաջ փակել միջնակարգ կրթության դռները, ուժեղացնել ուսուցման ռեակցիոն, կրոնա-բարոյական ոգին։

Միաժամանակ ցարիզմը չէր կարող անտարբեր մնալ Ռուսաստանի «այլազգիների» նկատմամբ, տեսնելով, թե ինչպես է խորանում ու ծավալվում նրանց կոնսոլիդացիան, ազգային զարթոնքը։ «Այլազգիների» հալածանքը նոր թափ էր ստանում։ «Ազգային ճնշումը հատկապես որոշակի արտահայտություն գտավ մշակույթի ասպարեզում, որտեղ այն նախ և առաջ դրսևորվեց դպրոցների ու հասարակական կյանքի այլ կողմերի ռուսականացման մեջ, և կրոնական ասպարեզում»[3]։

Անդրկովկասում ևս ազգային հալածանքը նոր դրսևորումներ ստացավ։ Այդ շրջանի մասին փայլուն խոստովանություն է անում ցարական բարձրաստիճանավոր բարոն Նոլդեն, որը 1905 թ. ցարին ներկայացրած զեկուցագրում հայտնում էր. «1881 թ. փոխարքայությունը վերացվեց։ Այդ փոփոխության հետ համընկավ Կովկասի բարձրագույն իշխանության հայացքների փոփոխությունը։ Կովկասյան նոր վարչության ամենաառաջնակարգ խնդիրը ճանաչվեց տեղացիների ռուսացումը, իսկ դպրոցը դրան հասնելու լավագույն միջոցը»[4]։

Ցարիզմը մինչ այդ այս կամ այն կերպ հաշվի էր նստում հայերի ազգային ձգտումների, էջմիածնի կաթողիկոսության հետ, աշխատելով դրանով սիրաշահել հատկապես արտասահմանի հայությանը և նրան ծառայեցնել իր արտաքին-քաղաքական նկատառումներին։ Սակայն ռուս-թուրքական պատերազմից հետո ցարիզմի արտաքին քաղաքականության մեջ դգալի շրջադարձ կատարվեց, և հայության դերը զգալիորեն նսեմացավ։ Ընդհանուր ռեակցիայի պայմաններում ազգային հալածանքն էլ ավելի էր ուժեղանում, քանի որ պատերազմից հետո հայկական ազգային-ազատագրական ձգտումները տրա-

---

3 «История СССР», т. II, М., 1965, էջ 226։

4 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 84, էջ 86 հ. կ.։

մագծորեն հակասում էին ցարիզմի հետապնդած գաղութային քաղաքականության նպատակներին։

Հայ ժողովրդի և մասնավորապես էջմիածնի նկատմամբ ցարական կառավարության պաշտոնական նոր վերաբերմունքն իր ձևակերպումն ստացավ Կովկասի փոխարքայի նախկին դիվանատան կառավարիչ բարոն Նիկոլայիի պաղտնի պաշտոնագրում, որ նա 1883 թ. կազմել էր կառավարության հանձնարարությամբ առաջիկա կաթողիկոսական ընտրություններին ցույց տալիք վերաբերմունքի պարզաբանման համար։ Բարոնը գտնում էր, որ մինչ այդ կաթողիկոսների նկատմամբ վարվող զիջողության քաղաքականությունը իրեն չի արդարացրել, որովհետև նրանք հետևել են ինքնուրույն գծի, իսկ արևմտահայության համակրանքը Ռուսաստանի նկատմամբ կախված է եղել ոչ թե կաթողիկոսների հեղինակության բարձրացումից, այլ ցարական կայսրության հզորությունից։ Ուրեմն, կաթողիկոս պետք չէ ընտրել արևմտահայերից։ «Համենայն դեպս ոչ մեր կառավարության արժանապատվությունն, ոչ էլ մեր ներքին քաղաքականության շահերն չեն թույլ տալիս, որ կաթողիկոսը մոռանար, թե Ռուսաց կայսեր հպատակն է և Ռուսաց օրենքների ենթակայն»,— գրում էր Նիկոլային և եզրափակում՝ «Ձևերի մեջ փափուկ եղիր, գործի մեջ ամուր»[5]։

1883 թ. մարտին ներքին գործերի մինիստր Դ. Տոլստոյի նախագահությամբ և լուսավորության մինիստր Ի. Դելյանովի ու Կովկասի կառավարչապետ Ա. Դոնդուկով-Կորսակովի մասնակցությամբ Պետերբուրգում տեղի ունեցած խորհրդակցությունը հավանություն տվեց նոր տեսակետին և միաժամանակ հատուկ ուշադրություն դարձրեց հայկական դպրոցների «աննորմալ» վիճակի վրա՝ որպես հակակառավարական պրոպագանդի օջախների։ Որոշվեց օգտվել կաթողիկոսական սթոռի թափուր վիճակից և նոր կանոններով սահմանափակել հայկական դպրոցների շրջանակները։

Ոգեշնչված կառավարական շրջանների աջակցությունից, կովկասյան իշխանություններն սկսեցին ամեն առիթով արգելքներ ստեղծել հայկական դպրոցների առաջ, վարկաբեկել ու հեղինակազրկել նրանց։ Հատկապես արտակարգ եռանդ ցուցաբերեց Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձու, մոլի միապետական-գաղութարար Կ. Յանովսկին։ Ցարական գործակալները ամենուրեք համոզում էին հայ երեխաներին թողնել ազգային դպրոցները և մտնել արքունի ռուսական ուսումնարանները։ Միաժամանակ հայ-լուսավորչական եկեղեցին, որը տնօրինում էր ազգային դպրոցներին, հոչակվեց վնասակար գաղափարների տարածող, որից և պետք էր խլել այդ տնօրինության իրավունքը։ Թիֆլիսի նահանգի ժանդարմական վարչության պետը 1882 թ. մարտի 12-ին կառավարչապետին ուղղած զեկուցագրում մեղադրում էր հայ հոգևորականությանը ազգային լեզուն, ավանդությունները պաշտպանելու, «հայկական ժողովրդական դպրոցներ հիմնելու մեջ»։ Նույն կրքով հայոց լեզուն դուրս էր մղվում պետական դպրոցներից։

Ազգային հալածանքը ուժեղացնելու նոր առիթ հանդիսացան Երևանում 1883 թ. մարտին տեղի ունեցած դեպքերը։

---

5 «Արևելյան մամուլ», 1886, № 9, էջ 410.
6 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 932, ց. 1, գ. 399, էջ 12։

Տեղի գիմնազիայի դիրեկտոր Բրաժնիկովի դեմ հայ մտավորական շրջաններում ուժեղ օպոզիցիա էր ստեղծվել։ Բրաժնիկովն ամեն առիթով հալածում էր հայ աշակերտներին, դպրոցից դուրս էր մղում հայոց լեզուն, հեռացնում էր նրանց, ովքեր համակրանքով էին վերաբերվում արևմտահայության ազատագրական շարժմանը։ Գիմնազիայից մի հայ աշակերտ հեռացվեց միայն նրա համար, որ կանանց հավաքույթում երկտողեր էր գրել և կոչ արել օգնել Վանի սովյալներին, ավելացնելով՝ «ժամանակն է գործ անել, գոնե մի փոքր մտածեցեք ազգի մասին»[7]։ Բրաժնիկովին բազմիցս զգուշացրել էին վերջ տալ հայերի հալածանքին, սակայն դա ոչ մի հետևանք չէր ունեցել։

Երևանցի Թովմաս Մհերյանը, չկարողանալով զսպել իր զայրույթը, մարտի 19-ին քաղաքային այգում վեճի է բռնվում Բրաժնիկովի հետ և ապտակում նրան։ Ցարական մարմիններն անմիջապես մի հսկա գործ են սարքում։ Չխորանալով կատարվածի էության մեջ, ոստիկանությունը 38 հոգու ձերբակալեց։ Նրանք մեղադրվում էին «Հայասերների» կամ «Ազգասերների» խմբակին պատկանելու, հայ պատանեկության մեջ ազգասիրական զգացմունքները վառ պահելու մեջ։ Չունենալով ավելի լուրջ փաստարկներ, իշխանությունները ձերբակալվածներին մեղադրում էին Վանի սովյալներին, Կիլիկիայի հայկական դպրոցներին օգնելու համար դրամ հավաքելու, գրքեր հրատարակելու (որոնց մեջ հիշատակվում էր «Անմահական խնձորը» հեքիաթը) մեջ։

Սակայն ցարի գործակալների հիմնական նպատակը ազգային դպրոցներին հարվածելն էր։ Գործի առթիվ ինքնակալին ուղղած զեկուցագրում ներքին գործերի մինիստրությունը գրում էր. «Հայկական ազգային դպրոցները՝ եկեղեցական-ծիսական արական ու իգական ուսումնարանները, հոգևոր սեմինարիաները և ճեմարանը պատանեկության մեջ ազգային ոգի են ներարկում, բացավառելով սեր դեպի Հայասաանը»[8]։ Ի վերջո չցանկանալով մեծ աղմուկ բարձրացնել այդ գործից, կառավարությունը որոշեց մեղմ պատիժներով վերջ տալ դրան։ Մի քանի հոգի միայն ենթարկվեցին վարչական աքսորի։

Բայց որքան մեղմ էին պատիժները, այնքան մեծ եղան հետևանքները։ Թխվեց հայերի «սեպարատիզմի» մասին առասպելը։ Կովկասի կառավարչապետը հեռուն գնացող եզրակացություններ արեց. 1883 թ. սեպտեմբերի 7-ին ներքին գործերի մինիստրի տեղակալ Պ. Օռժևսկուն հղած գաղտնի գրությունում նա գտնում էր, որ «անվերապահորեն անհրաժեշտ է մի շարք հետևողական, հաստատ, թեև շրջահայաց, միջոցառումներով հենց սաղմի մեջ արգելակել հայ ժողովրդի քաղաքական ինքնուրույնության վերականգնման մասին դեռևս աղոտ գաղափարների հետագա զարգացումը»[9]։ Կառավարչապետը պահանջում էր արմատապես փոխել վերաբերմունքը հայկական դպրոցների նկատմամբ, խիստ հսկողություն սահմանել հայկական բոլոր ընկերությունների և մամուլի վրա, պաշտոններից հեռացնել հայ աստիճանավորներին և ընդհանրապես այլազգիներին։ Սա արդեն ազգահալած քաղաքականության մի ամբողջ ծրագիր էր։

---

7 Տե՛ս ՀՊԿՊԱ, ֆ. 20, ց. 1, գ. 62, էջ 3—10։
8 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 1405, ց. 521, գ. 147, էջ 244 հ. կ.։
9 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 229, ց. 2, գ. 1136, էջ 6 հ. կ.։

Այսպիսի իրադրության մեջ 1884 թ. հունվարի 27-ին Պետերբուրգում խորհրդակցության հավաքվեցին նույն Դ. Տոլստոյը, Ի. Դելյանովը և Ա. Դոնդուկով-Կորսակովը՝ հայկական դպրոցների համար հատուկ կանոններ մշակելու նպատակով։ Փետրվարի 16-ին ցարը հաստատեց խորհրդակցության առաջարկած կանոնները։

Առաջին կետում որոշվում էր եկեղեցական-ծխական դպրոցի սկզբունքը. «Հայ լուսավորչական եկեղեցական ուսումնարաններ են կոչվում բոլոր հանրակրթական տարրական (սկզբնական) մեկ և երկդասյա այն ուսումնական հաստատությունները, որոնք գտնվում են սույն դավանանքի եկեղեցիներին ու վանքերին կից և պահվում են կամ բացառապես եկեղեցիների ու վանքերի դումարների հաշվին կամ ծխականների կողմից ցույց տրվող օժանդակությամբ»[10]։ Դպրոցների ղեկավարությունը իրականացվելու էր թեմական առաջնորդի ու թեմական տեսչի միջոցով, ընդ որում, վերջինս անպայման (հակառակ առկա իրականությանը) պետք է հոգևոր անձ լիներ։ Դպրոցների բացման, գոյության միջոցների, ծրագրերի, ուսուցիչների նշանակման մասին հոգևոր իշխանությունը անպայման պետք է հայտներ ուսումնական շրջանի հոգաբարձուին։ Ռուսաց լեզուն, Ռուսաստանի պատմությունն ու աշխարհագրությունն անպայման ավանդվելու էին ռուսերենով։ Ուսումնական վարչությունը հսկելու էր բոլոր առարկաների դասավանդմանը (բացի կրոնից) և իրավունք ուներ պահանջելու «իր կոչմանն անհամապատասխան» ուսուցչի հեռացումը։

Կանոնների 8-րդ կետում ասվում էր. «Եկեղեցական այն ուսումնարանները, որոնք իրենց դասընթացով դուրս են գալիս տարրական դպրոցների սահմաններից և իրենց կազմով երկու դասարանից կամ մեկը մյուսին հաջորդող բաժանմունքներից ավելին ունեն, ենթարկվում են ուսումնարանական վարչության հսկողությանը՝ մասնավոր ուսումնական հաստատությունների համար ընդհանուր հիմունքներով»[11]։ Միայն թեմական դպրոցները և ճեմարանը մնում էին նախկին տեսչության տակ։

Այսպիսով, նորամշակ կանոնները գրեթե անսահմանափակ հսկողության իրավունք էին տալիս պետական մարմիններին, որոնք կարող էին ուզած ժամանակ ազատվել անցանկալի մանկավարժներից, թելադրել իրենց կամքը ուսման բովանդակության վերաբերյալ։ Հոգևոր իշխանության տնօրինությունը հասցվում էր նվազագույն աստիճանի, դպրոցի նվաճած աշխարհիկ սկզբունքները անտեսվում էին։ Ամենաէականն այն էր, որ կանոններն արգելում էին տարրականից բարձր աստիճանի ազգային դպրոցի գոյությունը։ Մինչդեռ հոգևոր կոչվող դպրոցներն էին, որ ամենից շատ աշխարհիկ բնույթ էին կրում, իրենց մեջ պարունակում էին ազգային գպրոցի՝ միջնակարգի վերածվելու հարաճուն տենդենցը։ Ցարական բյուրոկրատիան այդ դպրոցներն համարում էր ազգային ինքնագիտակցություն սերմանող օջախներ և արգելք էր հարուցում նրանց առաջ, հայ մանուկին տարրականից բարձր կրթություն տալու իրավունքը վերապահելով արքունի և մասնավոր (որը ոչնչով չէր տարբերվում առաջինից) դպրոցներին, որտեղ մայրենի լեզվով ուսուցման մասին խոսք լինել չէր կարող։

---

10 «Правила об армяно-григорянских церковных училищах на Кавказе», էջ 1։

11 Նույն տեղում, էջ 3։

Զգալով նոր կանոնների իսկական էությունը, էջմիածնի սինոդը կտրականապես հրաժարվեց ընդունել դրանք և խնդրեց հարցը հետաձգել մինչև նոր կաթողիկոսի ընտրությունը, որի իրավասության տակ էին ազգային դպրոցները։ Սինոդը հույս ուներ, որ ապագա կաթողիկոսը կկարողանա որևէ չափով փոփոխել կանոնների խստությունը։ Երկու կողմերն էլ անզիջում դիրք բռնեցին։

Էջմիածինը գործը հետաձգել տալու նպատակով Պետերբուրգ ուղարկեց Սուքիաս եպս. Պարզյանին։ Սակայն վերջինիս մայրաքաղաքում սպասում էր սառն ու չոր ընդունելություն։

Մինչ էջմիածնի պատվիրակը մաշում էր ցարական աստիճանավորների շեմերը, մինիստրական առանձնասենյակներում որոշվում էր հայ դպրոցի բախտը։ 1885 թ. հունվարին կառավարչապետի, Դ. Տոլստոյի, Ի. Դելյանովի և արտաքին գործերի մինիստրության Ասիական դեպարտամենտի պետ Ի. Զինովևի մասնակցությամբ դուրգյալ խորհրդակցություն տեղի ունեցավ, որը որոշեց անհետևանք թողնել սինոդի խնդրանքը և կանոնները չընդունելու դեպքում դիմել ծայրահեղ միջոցի՝ դպրոցների փակման, և դրանով ապագա կաթողիկոսին կանգնեցնել կատարված փաստի առաջ։ Փետրվարի 5-ին ցարը հաստատեց այդ որոշումը։

Սինոդը փետրվարի 21-ի նիստում դարձյալ անդրդվելի մնաց իր նախկին որոշման մեջ։ Առանձին-առանձին դպրոցները ևս հրաժարվեցին ենթարկվել նոր կանոններին։ Մարտ ամսից կովկասյան իշխանություններն սկսեցին փակել բոլոր հայկական դպրոցները (բացի թեմականներից)։ Էջմիածնի տվյալներով (որոնք ամենից հավաստին են), միայն Անդրկովկասում փակվեց 242 հայկական դպրոց[12]։ Փակված դպրոցների ընդհանուր թիվը Ռուսաստանում անցնում էր 300-ից։

1884 թ. կայսերահաստատ կանոնները և ապա հայկական դպրոցների փակումը խորապես հուզեցին հայ ժողովրդին։ Արդեն սինոդի գիմադրությունը, որի կազմակերպման գործում ակտիվ դեր էին խաղում Թիֆլիսի «բանադետ անձինք» և այն, որ ոչ մի դպրոց չենթարկվեց իշխանության պահանջին, վկայում էին հայերի խիստ բացասական վերաբերմունքը կառավարության ազգահալած միջոցառումների նկատմամբ։ Դպրոցներն ամենուրեք փակվում էին ոստիկանության միջամտությամբ։ Նկարագրելով դպրոցների փակումը, Ալեքսանդրապոլի գավառապետը գեկուցում էր. «Փակման և աշակերտների արձակման ժամանակ ես ականատես եղա խիստ տխուր և թախծալի պատկերի։ Լուռ ու համեստորեն ուսումնարանից միասին դուրս եկող արցունքոտ աչքերով աղջիկներից ու տղաներից բացի լալիս էին բոլորը, ովքեր ներկա էին դրան»[13]։

Այդ օրերին, սգալով ազգային դպրոցի կորուստը, ալեքսանդրապոլցի աշուղ Հուշարին (Խ. Նահատակյան) երգում էր.

«Ախպրտիք, չխնդաք, ըսեմ ընտիրը.
Տունս բլավ, հողը թափավ թնդիրը,

12 ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 50։
13 ՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 147, էջ 32։

Դուսն է մնացեր հացի գնդիրը,
Իլլաճ չկա. տանիմ եփեմ փոնիրը»[14]։

Աշուղի կարծիքով, էլ ուրիշ ելք չկա, մնում է երեխաներին ուսման ուղարկել արքունի ռուսական դպրոցը։

Ապագա բանաստեղծ Հ. Հակոբյանը, որը սովորում էր Գանձակի գիմնազիայում, մի ցասկոտ ճառ-թռուցիկ է տարածում աշակերտների շրջանում, որի մեջ տակավին պատանի բանաստեղծը գրում է.

«Հաճո՞ է ձեզ տանել մեջքներիդ այն գահը,
Որի վրա նստած է հյուսիսի ագռավը...»[15]։

Ժողովրդի հակացարական տրամադրությունների ամենացայտուն արտահայտությունը եղավ Թիֆլիսի հայ նարոդնիկական խմբակի հրատարակած «Հայ-եղբայրներ և հայ-քույրեր» թռուցիկը։ Այն տարածվեց Թիֆլիսում, Բաքվում, Գանձակում և մեծ անհանգստություն պատճառեց ոստիկանությանը։ Կոչ անելով ժողովրդին պայքարել ցարի բռնությունների դեմ և պաշտպանել մայրենի լեզուն ու դպրոցը, թռուցիկի հեղինակները զգում էին, որ ցարիզմը թշնամի է բոլոր ժողովուրդներին և հենց ռուս ժողովրդին՝ «Այո՛, հարյուր միլիոնից բաղկացած այդ ժողովուրդը նույնպիսի զոհեր են իրանց բռնակալների ձեռքում, որպիսին և մենք ենք, բայց մի՛ մոռանաք, որ այդ ժողովուրդը այսօր թե վաղը կարող է ազատվել այդ լծից և իհարկե այդ ազատությունը ձեռք բերելու համար նա գործում է, միջոցների է դիմում»[16]։

Ցարիզմի բռնությունները խոր դայրույթ առաջացրին նաև արևմտահայության շրջանում։ Պոլսի մամուլը բազմաթիվ հոդվածներով անարգանքի սյունին գամեց ռուսական ինքնակալի ասիմիլյատորական ձգտումները, դրանք համարելով «ոչ միայն մեծ անիրավություն, ապերախտություն և անարդարանալի բռնաբարություն, այլև քաղաքական ծանր սխալ մը» («Արևելյան մամուլ»)։ (Արևելահայ մամուլը այդ շրջանում ստիպված էր համեստորեն լռել, քանի որ գրաքննությունը խիստ կերպով հետևում էր նրա ամեն մի քայլափոխին)։ «Մասիս» շաբաթաթերթը նկարագրելով արևելահայ դպրոցների շուրջ եղած անցուդարձը, մարգարեաբար հայտարարում էր. «Բայց ռուսահպատակ հայք վհատելու չեն։ Դոլսդոյներու և Տոնտուքոֆներու բռնակալ իշխանությունը չի կրնար մշտնջենական լինել»[17]։

Ցարիզմի համար ակնհայտ դարձավ հայ ժողովրդի բացասական վերաբերմունքը կառավարության դպրոցական քաղաքականության նկատմամբ։ Եվրոպական մամուլը ևս բացասական դիրք էր բռնել այդ հարցում։ Ցանկանալով լրիվ հեղինակազրկվել ու մեղադրվել կրոնական հալածանքի մեջ, ցարական իշխանությունները որոշեցին առժամանակ որոշ նահանջ կատարել և իրենց նպատակներն իրագործել ապագա կամակատար կաթողիկոսի միջոցով։

---

14 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ (ՊԻԱ), Մ. Թամրազյանի արխիվ, № 115։
15 Հ. Հակոբյան, Երկերի ժողովածու, հ. 3, 1958, էջ 24։
16 ՀՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 53, էջ 3 հ. կ. (Թռուցիկի մասին մանրամասն տե՛ս Մ. Գ. Ներսիսյանի «Նարոդնիկական խմբակներն Անդրկովկասում» գիրքը, էջ 62—65)։
17 «Մասիս», 1884, 29 դեկտեմբերի, էջ 532։

Հայկական քաղաքական գործիչներն զգացին այդ բանը և պայքար ծավալեցին (և՛ Թիֆլիսում, և՛ Պոլսում) կաթողիկոսական աթոռին վստահելի մարդ նստեցնելու համար, սակայն ցարը կաթողիկոս հաստատեց երկրորդ թեկնածուին՝ Մակարին, որի վրա մեծ հույսեր էր դնում։ Մակարի կաթողիկոսանալը դժգոհությամբ ընդունվեց հասարակության կողմից։

Աշխատելով վերականգնել կաթողիկոսի հեղինակությունը, որպեսզի հետո նրա միջոցով ազդի ժողովրդի վրա, կառավարությունը առերես զիջեց նրա խնդրանքին և թույլ տվեց վերաբացել դպրոցները։

1885 թ. դեկտեմբերի 27-ին Պետերբուրգում դարձյալ խորհրդակցություն տեղի ունեցավ, որը քննեց կաթողիկոսի առաջարկները 1884 թ. կանոնների մեջ որոշ փոփոխություններ մտցնելու մասին։ Սակայն սկզբունքային ոչ մի զիջում չարվեց։ Երբ կառավարչապետը հեռագրով հայտնեց Մակարին դպրոցների բացման թույլտվության մասին, ապա հանրությունն այդ լուրն ընդունեց ցնծությամբ։ Կաթողիկոսը կարծում էր, որ իր առաջարկներն ընդունվել են, բայց երբ ստացվեց խորհրդակցության մանրամասն որոշումը, Մակարն զգաց, որ իրեն խաբել են։ Նրան այլևս ոչինչ չէր մնում անելու, քան կարգադրել 1884 թ. կանոնների և նոր «բացատրությունների» հիման վրա բացել դպրոցները։ Նա իր հիասթափության մեջ մխիթարություն էր գտնում այն բանում, որ պատվիրում էր գլխավորապես ուշադրություն դարձնել երկդասյա դպրոցների քանակի շատացման վրա։

1886 թ. հուլիսին «Արարատ» ամսագրում հրատարակվեցին Էջմիածնի մշակած եկեղեցական-ծխական դպրոցների կանոնները։ Դրանցում Մակարն աշխատել էր շեշտել այն հարցերը, որոնց վրա կառավարական խորհրդակցությունն ավելորդ էր համարել հատուկ կանգ առնել։ Պարզորոշ կերպով ընդգծվում էին կաթողիկոսի իրավունքները դպրոցների տնօրինության հարցում, շեշտվում էր թեմականավարտների ուսուցչության իրավունքը, որոշ չափով կարգավորվում էր դպրոցական ներքին կյանքը։ Կանոններում ոչ մի խոսք չէր ասվում պետական հսկողության և արքունի տեսուչների իրավունքների մասին։ Սա յուրատեսակ օպոզիցիայի մի ձև էր, որով Էջմիածինն իր պասսիվ դիմադրությունն էր ցուցաբերում պաշտոնական օրենսդրությանը։

1886 թ. ուսումնական տարվանից այս կանոնների հիման վրա բացվեցին ու իրենց կյանքի նոր շրջանն սկսեցին կաշկանդիչ շրջանակների մեջ դրված հայկական դպրոցները։

Հայ հասարակությունը ստեղծված վիճակի համար սկսեց դարձյալ մեղադրել Մակարին, որ նա իբր դարձել է իշխանությունների կամակատար, դավաճանել է ազգային շահերին։ Սա, իհարկե, խիստ միակողմանի մոտեցում էր։ Բաղմելով կաթողիկոսական աթոռին, Մակարը կանգնեց կատարված փաստի առաջ՝ դպրոցները փակ էին։ Կաթողիկոսն ստիպված էր կատարել կառավարության պահանջները, դպրոցների եկեղեցական պատյանն ավելի երևութական դարձնել, որպեսզի մի կերպ կարողանա կենդանություն հաղորդել մեռնող կրթական օջախներին։ Կաթողիկոսին մեղադրող լիբերալները անուղղակիորեն նրան ամենակարող էին ներկայացնում, անտեսելով, որ այդ ժամանակ դրությունը կտրուկ փոխվել էր, և Էջմիածի՛ն չէր այն ուժը, որն ի վիճակի էր դիմակայելու ցարիզմի հարձակմանը։ Այդպիսի ուժ հայ իրականու-

թյան մեջ (և ոչ միայն հայ իրականության) դեռ նոր էր սկսել կազմավորվել և հետագայում էր իր բովանդակը ցույց տալու ցարական բռնակալությանը։ Իսկ մինչ այդ հարցերը լուծվում էին ուժեղի անարդարացի տրամաբանությամբ։

Հաջորդ մի քանի տարիներին Մակար կաթողիկոսը նույնիսկ փորձեց ուղղակի ըմբոստանալ ցարական բյուրոկրատիայի նոր ոտնձգությունների դեմ և աշխատեց կանոնավորել դպրոցական գործը։ Սակայն նրա ջանքերը քիչ արդյունք էին տալիս, որովհետև իշխանությունները գնալով ավելի ու ավելի անհանդուրժողական դիրք էին բռնում հայկական դպրոցների նկատմամբ։

Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձությունը 1886 թ. անմիջապես հետո նորանոր խոչընդոտներ ստեղծեց հայ դպրոցի վարանոտ առաջընթացի դեմ։ Ցարահաստատ օրենքները զուրկ էին պարզորոշությունից և կամայական մեկնաբանման լայն հնարավորություններ էին տալիս։ «Օրենքի ամեն մի կետ, որ պետական ուսումնարանական վարչության իրավունքին էր վերաբերում՝ սրա կողմից ավելի քան ընդլայնող մեկնաբանության էր ենթարկվում. իսկ ինչ որ հայոց եկեղեցական իշխանության իրավասության էր վերաբերում, հնար եղածին չափ, իսկ շատ անգամ դեռ էլ ավելի, կրճատվում, սահմանափակվում էր»[18]։ Հոգաբարձու Յանովսկին աշխատեց Գևորգյան ճեմարանի և թեմական դպրոցների սաներին զրկել ուսուցչության իրավունքից և ի վերջո պահանջեց, որ նրանք պետական ծննություն հանձնեն այդ իրավունքը ձեռք բերելու համար. հակառակ դեպքում նա սպառնում էր հեռացնել այդպիսիներին՝ որպես իրենց կոչմանն անհամապատասխան։

Յանովսկին պահանջեց նաև հայկական դպրոցների ծրագրից հանել հայոց պատմությունն ու աշխարհագրությունը, «քանի որ այն վայրերը, որտեղ ապրում են հայերը, ինքնուրույն պետություն չեն կազմում»[19]։ Թիֆլիսի Մարիամյան-Հովնանյան դպրոցում Յանովսկին առաջարկել էր, որ «առարկաները հայերեն ավանդելուց հետո ավանդվեն և ռուսերեն լեզվով, որ կարողանան աշակերտուհիները պատմել ռուսաց լեզվով բոլոր կարդացածները»[20]։

Այս ամենն ստիպեցին կաթողիկոսին եռանդուն բողոքներով դիմել կառավարությանը և մեղադրել Յանովսկուն ազգային հալածանքի մեջ։ 1887 թ. փետրվարի 27-ին Կովկասի կառավարչապետին ուղղած նամակում Մակարը տարակուսանքով գրում էր. «Ես ակամայից գալիս եմ այն եզրակացության, որ հոգատար կառավարությունը չի ցանկանում իմ ձեռքում թողնել այն իրավունքները, որոնք Բարձրագույն բացատրություններով շնորհվել էին ինձ մեկ տարի առաջ»[21]։

Կառավարչապետը սուիթը բաց չթողեց կշտամբելու կաթողիկոսին, որ նա չի արդարացնում իրեն և անհնազանդության նշաններ է ցույց տալիս։

Ի վերջո գործը դարձյալ հասավ Պետերբուրգ։ Յանովսկու և կաթողիկոսի միջև երկարած վեճը լուծելու համար 1883 թ. ամռանը Անդրկովկաս գործուղվեց ներքին գործերի մինիստրի խորհրդի անդամ Ֆ. Գիրսը։ Սա իր կազմած զեկուցագրում ստիպված էր մեծ մասամբ մեղադրել Յանովսկուն, որի

18 «Մշակ», 1905, № 127։
19 ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 113, էջ 59 հ. կ.։
20 ԳԱԹ, Սնդրակյանի արխիվ, բաժ. 1, № 8, էջ 75։
21 ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 113, էջ 69։

պահանջներն անիրավացի էր համարում։ Խիստ ուշագրավ է, որ ներքին գործերի մինիստր Դ. Տոլստոյը, կարդալով զեկուցագրի այն մասը, որտեղ Գիրսը անօրինական էր համարում հայոց դպրոցների ուսուցիչներից պետական ուսուցչական վկայական պահանջելը, մակագրել էր. «Ռուսական ժողովրդական դպրոցներում ևս այդ բանը պահանջվում է միայն Ժողովրդական լուսավորության մինիստրության ուսումնարանների և ոչ թե բոլոր դպրոցների համար։ Եթե նույնը պահանջվեր մեր ռուսական դպրոցներից, ապա գրեթե բոլորը ստիպված կփակվեին»[22]։

1889 թ. մարտի 5-ին Պետերբուրգում կայսեր հաճությամբ խորհրդակցության հրավիրվեցին Դ. Տոլստոյը, Ի. Դելյանովը, Ա. Դոնդուկով-Կորսակովը և Ֆ. Գիրսը։ Ցարական մինիստրները եկան այն եզրակացության, որ առայժմ կարիք չկա խիստ միջոցների դիմել և որոշ զիջումներով պետք է «ընդառաջել» կառավարությանն, այնուամենայնիվ, հավատարիմ կաթողիկոսին, «սակայն միայն ժամանակավոր միջոցի ձևով, որպեսզի կառավարությունը հնարավորություն ունենա, անհրաժեշտության դեպքում, վերացնել այդ արտոնությունը»[23]։

Որպես ժամանակավոր միջոց թույլատրվեց պետական դպրոցներում հայոց կրոնը հայերեն ավանդել, հայկական դպրոցների ուսուցիչների համար սահմանվեց 5-ամյա ժամկետ՝ պետական վկայական ձեռք բերելու համար, այդ դպրոցներում արգելվեց դասավանդել Հայաստանի պատմությունն ու աշխարհագրությունը։ Սրանով ցարիզմն ուզում էր ժողովրդին մոռացնել տալ նրա անցյալը, զրկել նրան իր ներկայի ու ապագայի մասին մտածելու հնարավորությունից։ Բայց նա անտեսում էր, որ ինչպես անհատին հնարավոր չէ ստիպել մոռանալու իր կենսագրությունը, այնպես էլ ժողովրդին չի կարելի ստիպել մոռանալու իր բազմադարյան պատմությունը։ Ուսուցչական վկայականի պահանջը հայ դպրոցի անխոնջ մշակների համար ստորացուցիչ բան էր, երբ տարիների վաստակով մարդիկ ստիպված պետք է լինեին վերստին կանգներու քննական սեղանի առաջ։

Այսպիսով, կառավարությունը սահմանափակումների մի շղթա էլ էր գցում հայ դպրոցի վիզը և նոր կամայականությունների դուռ բացում։ Զգալով դրության ավելի վատթարացման վտանգը, էջմիածինն աշխատեց մի շարք միջոցառումներով ամրապնդել դպրոցի կազմակերպությունը, որպեսզի բյուրոկրատիան նոր միջամտությունների առիթ չունենա։

1889 թ. էջմիածինը մշակեց եկեղեցական-ծխական դպրոցների նոր կանոններ, որոնց մեջ դարձյալ շեշտվում էր հոգևոր իշխանության դեկավար դերը դպրոցական գործում։ Սրանով կաթողիկոսը ցանկանում էր կառավարությանը ցույց տալ, թե դպրոցները գտնվում են իր հսկողության տակ, աշխարհիկ տարրը սահմանափակված է և կառավարությունը կարող է հանգիստ լինել հայկական դպրոցի հնազանդության համար։ Սա միայն արտաքին գունազարդում էր, քանի որ դրանից հետո էլ դպրոցական կյանքում առաջնակարգ դերը աշխարհիկ գործիչներն էին կատարում, թեև ընդհանուր ռեակցիայի

22 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 138, գ. 103, էջ 38 հ. կ.։
23 «Записки об армянских школах», СПб, 1911, էջ XXXVII։

սաստկացումը նկատելիորեն աշխուժացրել էր հոգևորականության հետադիմական մասին։

Կանոնները սահմանում էին ուսուցչական հատուկ ցուցակներ, որոնց մեջ մտածները միայն կարող էին աշխատել դպրոցում։ Ուշագրավ էր հոգաբարձական մարմինների ընտրության կարգի ձևակերպումը, մարմիններ, որոնց գոյությունը հավասարակշռությունից հանում էր միապետական ոգով առաջնորդվող ցարական բյուրոկրատիային։ Այս կանոնների համաձայն, ուսումնական ծրագրերից հանվում էին ընդհանուր պատմությունն ու աշխարհագրությունը. ըստ կայսերական օրենքի Ռուսաստանի պատմությունն ու աշխարհագրությունը պետք է ավանդվեր այն դպրոցներում միայն, որտեղ ավանդվում էին նաև ընդհանուր պատմություն և աշխարհագրություն։ Սրանով էջմիածինը յուրօրինակ վրեժ էր լուծում իշխանություններից Հայաստանի պատմությունն ու աշխարհագրությունն արգելելու համար։ Դրա փոխարեն հայոց լեզվի ծրագրում ընթերցանության համար մեծ տեղ էր հատկացվում անցյալի հայ պատմիչների գործերին, որպեսզի աշակերտները որևէ կերպ տեղեկություններ ստանան հայրենի անցյալից։

Բացի այդ, կաթողիկոսը ուսուցիչների հատուկ դասակարգում մտցրեց՝ ըստ նրանց կրթության աստիճանի, սահմանեց վարձատրության որոշակի կարգ՝ աշխատավարձի մինիմում, որը թեև ինչ-որ չափով բարելավում էր ցածր վարձատրվող ուսուցիչների նյութականը, բայց դրանից զգալիորեն տուժում էին որակյալ ուսուցիչները։

Այս բոլոր փորձերը վերջին հաշվով ճարահատյալ ճիգեր էին, քանի որ ստեղծվող անտանելի պայմաններն ու արտաքին ճնշումը հնարավորություն չէին տալիս լրիվ իրագործել նախագծվող միջոցառումները և դրանք նպատակին հասցնել։ Սակայն, եթե վերանանք դպրոցի համար ստեղծված խիստ անբարենպաստ պայմաններից, ապա դպրոցական նոր կանոնները որոշ առաջընթաց էին նախորդների համեմատությամբ, քանի որ ելնում էին տարիների փորձից ու ժամանակի պահանջներից և աշխատում էին ամրապնդել դպրոցի կազմակերպությունը։

1886 թ. հետո, երբ ազգային մասսայական դպրոցը զրկվեց միջնակարգի վերածվելու հնարավորությունից, խիստ մեծացավ թեմական դպրոցների նշանակությունը։ Լավագույն մանկավարժներից շատերը իրենց ջանքերը կենտրոնացրին այստեղ, բարձրացավ այդ դպրոցների մակարդակը։ 1896 թ. էջմիածինը հատուկ ծրագիր մշակեց նրանց համար, որով նրանք պետք է ունենային 6-դասյա կազմ (լրիվ միջնակարգ)։ Արդեն երկու-երեք տարի հետո բոլոր թեմական դպրոցները լրացրեցին դասարանների կազմը, նրանցից յուրաքանչյուրում աշակերտների թիվը հասավ 500-ի։ Անհամեմատ աճեց նաև Գևորգյան ճեմարանի դերն ու նշանակությունը։

Այսպիսով, ցարիզմի օր-օրի սաստկացող ազգահալած քաղաքականության հետևանքով 1880-ական թվականների կեսին հայկական դպրոցը խիստ սահմանափակվեց, դպրոց, որը մինչ այդ ընթանում էր վերելքի ուղիով։ Ցարիզմն այլևս չէր վստահում հայ եկեղեցուն, նա ցանկանում էր կարգապես պահպանել աշխարհիկ ընթացքով զարգացող հայ դպրոցի եկեղեցական շրջանակները, օգտվել եկեղեցու նյութական միջոցներից և նրան զրկելով կրթական գործում ունեցած մյուս իրավունքներից, դպրոցից դուրս մղել ազ-

գային ոգին, խեղդել նրա աշխարհիկ բնույթը և նրան վեր ածել պոբեդոնոսցևյան տիպի ճզմված ու խեղված ուսումնական հաստատության։ Դրանից հետո հայերի ռուսացման առաջ կբացվեին բոլոր ճանապարհները։

Այս քաղաքականությունը մեծ հարված հասցրեց դպրոցին։ Խիստ նեղացավ ուսման ծավալը, բացառվեց ազգային միջնակարգ կրթության հնարավորությունը, դպրոցական միջավայրը անհրապույր դարձավ նրա գործիչների համար, նկատելիորեն սառեց հասարակության հետաքրքրությունը դպրոցի նկատմամբ։ Հեռանկարները հույսեր չէին ներշնչում։ Այս ամենը հուսալքում ու անտարբերություն էր ծնում, հրապարակ էր հանում հետադիմական ուժերին, դպրոցները վեր էր ածում կամայականությունների ասպարեզի։ Եվ միայն ժողովրդի, նրա հայրենասիրական ուժերի մեծամեծ անձնազոհությունների գնով էր, որ դպրոցը կարողացավ առժամանակ պահպանել իր գոյությունը։ Ցարական անզուսպ հալածանքի պայմաններում դա կատարյալ մարտիրոսություն էր։

Հաջորդ տասնամյակում ճնշումներն ավելի սաստկացան և 90-ական թվականների կեսերին ցարիզմը երկար ժամանակով ամուր փակեց հայկական դպրոցների դռները։